

ԱՐՓԻ ՄՈՒՐԱՂ-ՅԱՆ

ԱՆԳԼԻԱԳԻՐ ՏԱՅ ՎԻՊԱՍԱՆԻ
«ՁԵՁ ԵՄ ԴԻՄՈՒՄ, ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ» ԵՐԿՐ

Եղևնից մագապործ Լևոն-Զավեն Սյուրմեյանը հայերեն բանաստեղծությունների «Լույս Չվարթ» գրքով ճանաչվելով՝ հայրնվեց ամերիկյան միջավայրում, որտեղ ունեցավ «ստեղծագործական լռության» ու փառապագին որոնումների մի երկարատև շրջան: Այդ ընթացքում նա լրջորեն ուսումնասիրեց Ամերիկյան, համաշխարհային գրականությունն ու մշակույթը, ինչպես էլ սփյուռքահայ գրականությունն ու գրողներին, հստակեցրեց իր ստեղծագործական ծրագրերը: Որոնումների ընթացքում նա պարզեց, որ անգլիական մշակույթի գաղութային ազդեցությունից աստիճանաբար ազատագրվող էլ ինքնուրույնացող բազմազգ ու բազմացեղ Ամերիկյան ուներ բազմաշերտ գրականություն, որի պարմության, առկա վիճակի, զարգացման ուղիների էլ հեռանկարների համապարկերում ինքը պիտի ամրակայվեր: Անցյալի ամերիկյան գրականությունը իսկապես անգլիական գրականության ազդեցությամբ ստեղծված «քաղաքավարի թեմաների», ընդունելի բարեկիրթ լեզվի էլ պետականորեն թույլատրելի ճշմարտություններին «այո՛» ասող մեծամասնության գրականություն էր, որտեղ բուն ամերիկացիները վաղուց արդեն սպառել էին իրենց էլ այլևս հին մեթոդներով ի վիճակի չէին նոր խոսք ասելու: Եկել էր «ո՛չ» ասող ամերիկաբնակ ոչ ամերիկացի փոքրամասնությունների ժամանակը: Սրանք իրենց խնդիրները, գեղարվեստական մրաժողության յուրահարկությունները, իրենց գույնն ու բույրն էին բերում ամերիկյան գրականություն, թարմ ու ինքնավար, մարերիմ ռոճով իրենց ազգային ու մարդկային իրավունքների մասին կենսական ճշմարտություն էլ անկեղծություն էին հրամցնում գեղարվեստի լեզվով, էլ ստեղծվում էր ըստ ամենայնի հարուստ ու գեղեցիկ գրականություն: Այս իրողության համոզիչ բացարձակություններում Սյուրմեյանն ընդգծում է մանավանդ գրականությունն ընթերցողին հարազատացնող երկու հանգամանքների՝ **անկեղծության** ու **մարերմիկ ռճի** կարևորությունը, առանց որոնց չէր կարող լինել ո՛չ ճշմարիտ գրող, ո՛չ նոր խոսք, էլ ո՛չ արվեստի արժեքավոր երկ:

Գրողի անհարակաճության էլ ռճի մասին նրա ուղենշային դիպողությունների ու բանաձևումների առաջին կիրառողը հենց ինքն էր. իր սեփական ռոճով ու գրելաձևով նա ճանաչվեց ամերիկյան գրականության մեջ, ուր պարկառու էր լինել կազմում վառ ու հզոր անհատները: «Արվեստը նորն է ու մարերմիկ, - բանաձևում էր Սյուրմեյանը: - Եւ գրողը պետք է մարերմ լինի, որպեսզի նոր լինի: Մարերմ ռճը, օրինակ, կարող է թերություններ ունենալ, անհարթ ու երկարաբան լինել, ինչպես Դ-բայզըրինը, բայց որոշ

չավիով ինքնապիպ կլինի ու անկեղծ: Իսկ **գրողը ինքնապիպ լինել չի կարող, եթե անկեղծ չէ: Արվեստում ինքնապիպության գաղափարը անկեղծության մեջ է: Գրողը պետք է խիզախություն ունենա լինելու այն, ինչ որ է: Առանց այս ինքնահավաստումի ոճ չի լինի, ոչ էլ գրականություն առանց անկեղծության»¹:**

Ամերիկյան հեղափոխական գրականության բարձունքները նվաճած հեղինակների բացարձակ մեծամասնությունը դրսևցին էին՝ Սյուրմեյանի ասած «ոչ ամերիկացի ամերիկացիները»: Սրանք են սրբեղծել հեղափոխական ամերիկյան արձակի լավագույն մասը, սրանք են բնորոշում այդ գրականության դեմքը և առաջ մղում գեղարվեստական մրաժողությունն առհասարակ:

Մեկուսացած ազգային, մեր սեփական ցավի մեջ միայնակ փապակվելու սկզբից եւեթ դեմ է եղել Սյուրմեյանը: Նա փնտրել է գրել էր հայի ազգային նկարագրի վեհությունը, ցավն ու ողբերգությունը մարդկության մեծամասնությանը ճանաչելի դարձնելու, համաշխարհային լսարան նվաճելու թերևս ամենից արդյունավետ միջոցը: Ինքն իր դեմ կռվելով, հոգեբանական բազում արգելքների հաղթահարումով և հայերենից անգլերենի լեզվանցումով իր առաջին վեպը նա գրեց հայի չղարմանվող ցավը և նրա հոգու՝ բոլորին անհրաժեշտ գեղեցկությունը համամարդկայնացնելու գաղափարական ու գեղագիտական հստակ նպատակադրմամբ:

Վեպի հայերեն հրապարակության՝ հայ ընթերցողին ուղղված «Մենք պիպի հիշենք նրանց» խորագրով համառոտ ներածականում, որը գրվել է այդ երկի օտարալեզու հրապարակություններից փաստամյակներ հետո, Սյուրմեյանը մի քանի կետեր բացարձակ է փակ օտարալեզու հայ գրականության սրբեղծման նախադրյալների ու պարզաբանների մասին, որոնք դարձյալ ունեն կարևոր գիտարեսական ընդհանրացնող նշանակություն:

Կոչումով ու էությամբ հայ բանաստեղծ Լեոն-Ջավեն Սյուրմեյանն ու նրա բախտակիցներն **ինչո՛ր գրեցին անգլերենով, ֆրանսերենով, իսպաներենով, արաբերենով ու այլ լեզուներով և սկզբնավորեցին օտարագիր հայ գրականությունը:** Դա ժամանակների ու հանգամանքների թելադրանքն էր, սակայն հենց այդ պարագայում թե՛ դրսում, թե՛ Նայաստանում նա արժանացել է կարճամիտ անհեռաբանների կշտամբանքին: Նա ցավով հիշում է այդպիսի մի դեպք: 1964 թ. Նայաստան այցելելիս, երբ «Ձեզ եմ դիմում, փրկի՛ններ և պարոններ» վեպի հայերեն թարգմանությունը դեռևս լույս չէր տեսել և գրեթե անծանոթ էր խորհրդահայ իրականությանը, երևանյան գրողների փառն էր կայացած մի հանդիպման ժամանակ Սյուրմեյանին անգլերենով գրելու, օտարագիր հայ գրող դառնալու համար լուրջ կշտամբողներ են եղել, և նա փակ է հիմնավոր ու փրամաբանական պատասխան. «**Պարզապես աշխատանքի բաժանում է: Դուք հայերեն եք գրում, ես՝ անգլերեն, և երկուսս էլ նույն նպատակին ենք ծառայում**» (էջ 12):

Եւ իսկապես, հայության ցավն ու փառապանքը, համազգային իղձերն ու փնեհերը

¹ Լ. Ջ. Սյուրմեյան, Նայագգի ամերիկացի գրողը. «Գրական թերթ», 2009, 22 մայիսի, թ. 17: Այս և հետագա ընդգծումները մերն են. Արփի Մուրադյան:

համաշխարհայնացնելու միասնական նպատակին Լ.-Զ. Մյուրմեյսանն անգլերեն գրելով ավելի արդյունավետ է ծառայել, քան կկարողանար այդ նպատակն իրագործել միմիայն հայերեն գրելով: Բացի ամերիկաբնակ հայերից՝ ոչ ոք ամերիկյան միջավայրում կարևորություն չէր տա այդ վեպին, եթե գրված լիներ հայերենով: Վեպը, որ տարիներին, տասնամյակների տպավորությունների և հիշողությունների, ինչպես և պատմական փաստերի իրացված արտահայտությունն էր, գրվեց և նախ՝ մամուլում ու ժողովածուներում տպագրվեց գլուխ առ գլուխ: Այսպես, «Ամերիկյան իմ արյան մեջ» գլուխը գրքի լույս տեսնելուց երեք տարի առաջ տպագրվեց, և Օբսֆորդի համալսարանի հրատարակչությունն արտատպեց անգլերեն դասընթացի համալսարանական մի դասագրքում: Մի ուրիշը՝ «Իմ ռուսական գդակը», նախապես տպվեց «Ամերիկյան լավագույն պատմվածքներ» ժողովածուում (1944 թ.), որ մեծ հեղինակություն վայելող մի ծաղկաբաղ էր ամերիկյան գրականությունից: Ահա այսպես Մյուրմեյսանը ամերիկյան իրականության մեջ նվաճեց տպագրության արժանի գրողի վարկանիշ, և հրատարակիչները հետաքրքրվեցին նրա սրելոճագործությամբ: Սակայն հոգեբանական մի նուրբ խնդիր կար՝ կապված հեղինակի մարդկային ու գրողական խառնվածքի հետ:

Գեղարվեստավավերական այդ վեպի առաջին արժեւորողներից մեկը՝ բարձրաճաշակ ու նրբանկատ Վիլյամ Սարոյանը, «Մեծարժեք և ընդիր» խորագրով համառոտ, բայց կողմնորոշիչ բնութագրականում նկատել է նրա թե՛ բովանդակային հարստությունը, թե՛ ժանրային, թե՛ գեղարվեստական յուրահատկությունները: «Վեպ, բնութ, քաղաքակիրթ» այդ գիրքը՝ կարակերպությամբ և ազնիվ ուժով գեղուն, մի ողջ սերնդի գեղարվեստավավերական կենսագրությունն է, իսկ նրա հեղինակը «մեկն է այն բազում հայ երեխաներից, որ թշնամուն խաղի բերին ու չմեռան»: Իսկապես էլ, ամեն ինչ ծրագրված էր, ամեն բան արված էր այդ երեխաներին ու ամբողջ հայ ժողովրդին խապառ ոչնչացնելու համար, բայց, հակառակ թշնամու, նրանք ապրեցին: Նրանց մասին մասամբ պատմել էին Ֆրանց Վերֆելն իր «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպում և «մի քիչ էլ» Էլզին Գրոսբլոուզը՝ «Արարար» վեպում: «Իսկ այսպեղ, - գրել է Վ. Սարոյանը, - առաջին անգամ տրվում է ամբողջ պատմությունը հենց այդ երեխաներից մեկի կողմից: Ոչնչացվեց նրանց աշխարհը, բայց ոչ կյանքը: Նրանցից շատերը հիմա Սովետական Նայաստանում են, Ռուսաստանում, Պարսկաստանում, Սիրիայում, Հունաստանում, Կանադայում, Մեքսիկայում, Նարավային Ամերիկայում ու Միացյալ Նահանգներում: Շատերը մեռան Երկրում, այն աշխարհի հետ, որ ոչնչացվեց: Նրանց ընկերները, որ ավելի տոկոս էին ու բախտավոր, նրանց չեն մոռանա երբեք: Նրանց թշնամին հատուկ մի ազգ կամ հատուկ մի ժողովուրդ չէր: Նրանց թշնամին Չարն էր, այնքան վերացական, որ կարող է լինել ամեն մի առակում: Այդ երեխաներն, անտարակույս, ամենը էին: Եթե որեւէ ազգության պատկանում էլ էին, երեխաների ազգությունն էր այդ: Ոչ ոքի չէին անիրավել: Եւ սակայն, մարդկանց միջի Չարը ձգրեց ոչնչացնել նրանց, և, ասես իրական լինեին լոկ մի առակում, քան թե հենց իրականության մեջ, ապրեցին այս երեխաները:

Լևոն-Զավեն Մյուրմեյսանը եկավ Ամերիկա և սկսեց նորոգել իր կյանքի

ավերված առասպելը: Այս գիրքն այդ նորոգման պարամոնությունն է, պարամոնություն առանց արելության, որովհետև արելությունն ու մահը ընկերներ են, իսկ սա կյանքի՝ պարամոնություն է:

«Ձեզ եմ դիմում, քիկիներ եւ պարոններ» վեպը պարունակում է ամենալավ էջերը, որ երբեւէ կարդացել եմ»²:

Մարոյանական այս բնութագրումը շար կարեւոր ու կողմնորոշիչ է վեպի բացառիկության ու գեղարվեստական յուրահատկությունների մասին, որով պարզ է դառնում ամերիկյան իրականության մեջ նրա ապշեցուցիչ ընդունելության բուն պարճառը. **«Գրեթե ամբողջ գիրքը քնարական բանաստեղծություն է: Սյուրմեյանի ոճը պարզ է եւ անսթեթիկ, չեւրմ ու սրամիտ եւ միաժամանակ լի քաղաքակիրթ ու խելացի մարդու թախիծով»** (էջ 4):

Նեղինակային մի խոստովանություն շար բան է պարզում. երկարատև այն «լռությունը», որի մեջ ձեռավորվել ու հասունացել էր գրելիքը, մի օր պիտի պոթեկար: Մեռակնոցով աղմկոտ աշխարհից անջրպետված (իբր քրեական խնդիր ուներ եւ բժշկի խորհրդով աչքերը պաշտպանում էր կալիֆոռնիական ծակող արեւից), կյանքի աղմուկից քաշված, առանց մի կտոր հաց իսկ ծամելու սկսել է գրել իր կյանքի գլխավոր գիրքը: **«Ամբողջ ժամանակ, որ գրում էի գիրքը, - խոստովանել է Սյուրմեյանը, - սեռ ակնոց էի կրում ու ձեռացնում էի, թե Կալիֆոռնիայի պայծառ արեւից աչքերս բորբոքվում են, եւ դա ոչ միայն բաց օդում, որպեսզի թաքցնեի արցունքներս, «Բժշկի խորհուրդն է», - մոլորում էի ես... Ինձ արգելեցի զգալ, մտքովի նովոկային էի ներարկում իմ օրգանիզմը, բթացնելու համար ցավս, միաժամանակ անորոշությունս զարմանք էր պարճառում ինձ: Ես պետք է զգուշանալով, անպաճույճ ներկայացնեի անցքերը, ինչպես հիշում էի, բայց իմ սենյակի մտերմության մեջ արցունքներս ակամա գլորվում էին այտերովս, փարիներով գսպված արցունքներս հոսում էին, ասես մի ուրիշի աչքերից, մինչ մարդը թաքնվում էր սեռ ակնոցների ետեւ»** (էջ 5-6):

Սրեղծագործական իրադրության եւ հեղինակի հոգեվիճակի գնահատման առումով այս ինքնաբնութագրությունը, թվում է, սպառիչ է: Նա պարտավոր էր գրել եւ չէր կարող չգրել, որովհետև անասելի ողբերգությունից փաստամյակներ հետո էլ բոլոր նահապակներն ու մեռցվածները հորաքայր Ազնիվի նման պահանջում էին՝ «հիշեցե՛ք մեզ»: Բայց ո՞ւմ էին դիմում եւ ումի՞ց էին պահանջում. այն դեռահաս հայ որբուկներից, որոնց թուրքերը պիտի գային փանելին իրենց գյուղերը եւ հայի անունները փոխելով նրանց դարձնելին «Նասան, Մեհմեդ, Սուլեյման ու մեծացնելին որպես հավաքացյալ, թվապարված թուրքեր, որոնց արգելված էր հիշել»: Ոչ միայն ֆիզիկական բնաջնջումը, այլեւ սա է ընկած ցեղասպանության վերաբերյալ ՄԱԿ-ի բանաձևի հիմքում:

Ուրեմն՝ Չարը խրաճված է եղել հայոց պարմական հողերի վրա սրեղծված թուրքական պետության մեջ, որը հայության հայրենիքի բռնազավթման, ժողովրդի բնա-

2 Լ.-Զ. Սյուրմեյան, Ձեզ եմ դիմում, քիկիներ եւ պարոններ, Երևան, 1980, էջ 3-4: Մույն հրապարակությունից քաղվածքների էջերն այսուհետև շարադրանքում փակագծերի մեջ:

ջնջման հետ միասին ծրագրած է եղել նաև հայի պարմական հիշողության ոչնչացումը: «Երևի այնքան դեռապի էինք, որ ոչինչ չէինք հիշի: **Թեկուզ մենք հապիկ հայ, որ կարող էր հիշել, պիտի ողջ չմնար**» (Էջ 5), - միայն ազգային պարկանկության հիմունքով հայերի բնաջնջումը հիշելով՝ գրել է Կասր Կարեկանում ամեն ինչ իր աչքով Կեսած, ծնողներին, հարազատներին ու ողջ հայրենիքը կորցրած, սակայն հրաշքով վերկված ու վերապրած հեղինակը հայ ընթերցողին ուղղված ներածականում:

Եւ այս պարագայում հնացած ու բռնագրոսիկ է թվում խորհրդային ժամանակներում մոգոնված այն Կեսակները, թե թուրք ժողովուրդը ոչ մի մեղք չունի հայերի ցեղասպանության մեջ, միայն արյունարբու սուլթան Նամիդն ու նրա հակահայ բաղաբակաւությունը շարունակած ու գործադրած երիպթութիւնի կառավարությունն են մեղավոր³: Այսպիսի մոլորության կարելի է հանգել միայն այն դեպքում, եթե թուրքական պետությունն ու թուրք ժողովուրդը դիպվեն որպէս հակոբնյա գոյություններ, որ գործել են իրարից անկախ: Իսկ ո՞վ էր իրագործողը, թուրք պաշտոնյան, բանակը, ժանդարմները, զինված մարդասպանները, թալանող ու բռնաբարող թուրք ամբոխը, որին գրգռում ու նպարակամում էին թուրք հոգեւորականներն ու մարավորականները: Կասեք՝ սա թուրք ժողովուրդը չէ՞, հապա ուրիշ ի՞նչ է կամ ո՞վ է նա, թուրք հասարակությունը ուրիշ ի՞նչ դասերից կամ խավերից է բաղկացած: Նուրավո՞ր է պարկերացնել, թե որեւէ պետություն առանց իր ժողովրդի ընդհանուր Կրամադրության, հավանության ու աջակցության կարող է այդքան ահեղի արկածախնդրության դիմել:

Նայերի ցեղասպանության, նրանց հանդէպ պետականորեն գործադրված թուրքական անորակելի ոճրագործությունների դարապարպումը համայն մարդկության պարպականությունն է, մարդկություն, որի մեջ թուրք ժողովուրդը դեռեւս չկա, բանի որ նա դարձյալ իր կառավարության մերժման եւ ուրացման ծիծաղելի փողն է հնչեցնում: Եթե նույնիսկ մրաժենք, թե Վ. Սարոյանին, Մ. Արլենին, Լ.-Զ. Սյուրմէլյանին հայկական ծագումն ու ազգային ցավն են պարպադրել արծարծելու Եղեռնի թեման, ապա ո՞չ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հեղինակ Ֆրանց Վերֆելն էր հայ, ո՞չ էլ «Արարապ» վեպի հեղինակ Էջին Գրոսբլոտուն ու ամերիկացի, գերմանացի, իսպանացի, ֆրանսիացի, հրեա եւ այլ ազգերի մյուս գրողները, ովքեր համամարդկային հոգեմարավոր ու բարոյական արժեքների բարձր գիտակցության ու խոր մարդասիրության դիրքերից պարկերել ու դարապարպել են մարդկության դեմ գործված մեծ ոճիրը՝ Ի. դարի առաջին ցեղասպանությունը: Ուրեմն՝ հեղինակն առավել եւս պարպավոր էր կարարել նահապարկների պարվիրանը՝ արար աշխարհին բարեխղճորեն ներկայացնելով նրանց ողբերգական մարմիրառության պարմությունը:

Եւ ոչ միայն դա: Եղեռնի պարճառով Կարբեր երկրներում ձեւավորվել էր հայկական Սփյուռքը, որը սկզբնավորումից ի վեր հայապահպանման խնդիր ուներ եւ հիմա՝ առավել եւս: Փոքրիկ կոյսակների պէս օտար օվկիանոսների ալեկոծություններին ու քմահաճոյքին ենթակա հայությունը աղի եւ շաքարի պէս հալվում է, բայց իր հոգեմարավոր ու

3 Տե՛ս «Սփյուռքահայ գրողներ», հ. 1, Երևան, 1980, էջ 302:

բարոյական ներքին ուժերի գերլարումով, ամենօրյա մաքառումով ջանում է պահպանել իր ինքնությունը, սակայն մեծ վրանգը, ցավոք, չի վերացել, և արդիական է: Շ. Շահնուրի բնորոշած նահանջի ու ձուլման փխուր հեփեանքները: «Այն հայը, որ կորցնում է ազգային գիտակցությունը, - կարդում ենք Սփյուռքի իրողությունն ու նրան սպառնացող վրանգները հրաշալիորեն ճանաչած Լ.-Ջ. Սյուրմեյանի գրքում, - և այլևս փույթը չէ, որ ասում է՝ ես չեմ ուզում հիշել, ես հիմա ամերիկացի եմ, Ֆրանսիացի, անգլիացի, դադարում է մարդ լինելուց: Ես խղճում եմ նրան, և փույթս չէ, եթե նա հաջողակ է գործի մեջ: Սփյուռք նշանակում է ազգի մեկ երբորդը՝ Եղեռնից վերապրողները և նրանց շառավիղները: Մենք երկու միլիոն հայ կորցրինք Առաջին աշխարհամարտում ու դրա հեփեանքով: Այժմ Սփյուռքին սպառնում է «սպիտակ ջարդը» - ամբողջական ձուլում զանազան մշակույթների մեջ: Սփյուռքը հերզ-հենքն հալչում է: Մեծ փաղանդներ, պահեստի մարդկային մեծ ներուժ կա Սփյուռքում, որ մտխոլում է: Սփյուռքում շարք հայեր հերոսի կյանք են վարում: Մենք բարդ կերպովածքի հայեր ենք, և մարտ ենք մղում հայ մնալու գոնն ոգով» (էջ 15):

Այս բանաձևումն այսօր էլ առավել բան արդիական է: Լ.-Ջ. Սյուրմեյանի համոզմամբ՝ հավիթենական այդ կովում մեր հաղթանակը նույն այդ կոթվն է միայն և մեր կովելու կարողությունը, որի առաջնիչ ուժը մեր պարմական հիշողությունն է, որից թշնամին ջանում է մեզ գրկել: Իսկ այդ հիշողությունն անդադար թարմացնում, զորեղացնում է մեր մշակույթը, որը մարմնավորում է «հայի հավիթենական երազը»՝ «անդուլ, անվերջանալի կոթվ հանուն ազապության ու ազապության, պերք է ասեմ ես, ոչ միայն մեզ, այլև բոլոր մարդկանց համար, Նայասարնը ձեռքում պահում է Սասնա թուրը, իսկ Սասնա թուրը հարվածում է հանուն բոլոր մարդկանց: Եւ մենք պիտի գոյարենենք, բայց ոչ գաղութներում: Եւ գիտենք՝ Միացյալ Նահանգներում, Նարավային Ամերիկայում, Միջին Արևելքում, Ֆրանսիայում, Անգլիայում, Նուրասարանում և այլուր այս կոթվը, որ մենք մղում ենք պահպանելու մեր մշակութային ինքնությունն իր բոլոր պարավորություններով, պարպությանը է վերջանալու, բայց հենց այս կոթվը մի րեսակ հաղթանակ է և մեր կյանքին փալիս է սրեղծագործական մղում, խորություն ու բազմազանություն» (էջ 15):

Առաջ է գալիս նաև ժանրի խնդիրը: Մեզ քաջածանոթ են հայոց եղեռնապարտմի գեղարվեստական ու գիտական գրականության այլևայլ դրսևորումները՝ Ե. Օրլանի, Վ. Մինախորյանի, Ա. Անտոնյանի, Վ. Թոթովենցի, Գ. Մահարու, Նամասպեղի, Ն. Մնձուրու, Ն. Օշականի, Վ. Սարգսյանի, Մայքլ Ադլենի, Ռոզմարի Նարությունյան-Քոհենի, Ալ. Մացանովի, պարմաբան-ցեղասպանագետներ Զ. Կիրակոսյանի, Վ. Դադրյանի, Ա. Մելքոնյանի աշխատությունները, նույնիսկ թուրք գրողներ ու ցեղասպանագետներ Քեմալ Յալչընի, Օրհան Փամուկի, Թաներ Աքչամի, Զարաթուրի և ուրիշների ինքնակենսագրական վեպերը, վիպակները, պարմվածքները, վկայագրությունները, հուշագրություններն ու գիտական աշխատությունները: Նրանց գրական երկերը գեղարվեստի րեսակերից նվազ արժեքավոր կամ պարզապես արժեգուրկ կլինեն, եթե նրանց էջերում կերպավորված հեղինակներն իրենք կամ ներկայացրած իրական դեմքերը մնացած լինեին մասնավոր անձի անհատական կարգավիճակում և չներկայանային որպես

անցքերն ու իրադարձությունները իրենցով ընկալող ու ներկայացնող գեղարվեստական ընդհանրացումներ:

Իրական դեպքերը գեղարվեստի լեզվով են ներկայացված Սյուրմեյանի վեպում, որը, մեր դիտարկումով, որպես յուրահատուկ ռեալիստական կառույց, գործողությունների և իրադարձությունների ճշմարտացի պատկերման, մարդկային հոգեբանության խոր ու նուրբ վերլուծումների, գեղագիտական ինքնատիպ բացահայտումների հետ միասին, որպես պարմական ցավալի իրողությունների հավաստի պատկեր կամ հեղինակի փոստական բնութագրումով՝ **պարմություն** և **փոստարան**, ունի նաև պարմաճանաչողական վիր-խարի արժեք՝ որպես Եդեռնի իրողությունը հաստատող վավերագրություն ու վկայագրություն:

Վաղ մանկության երջանիկ օրերից մինչև 1915 թ. մեծ աղետը, մինչև ծնողների և հարազատների կորուստ ու որբություն, հարկադիր մահվան ճանապարհ, հրաշքով փրկություն և թափառումներ որբանոցից որբանոց, քաղաքից քաղաք և երկրից երկիր, Թուրքիայից Ռուսաստան, նորից Թուրքիա, ապա Նայաստան, նորից Թուրքիա, այն-պեղից՝ մինչև Ամերիկա և ամերիկայացում. սյուժեյային այս հիմնական գիծը, այս պարմությունն է վիպական ձևով ներկայացնում Սյուրմեյանի երկը:

Վեպում կերպավորված առանցքային հերոսը, որպես դեպքերի մասնակից ու ակա-նաբեկ-պարմող, է՛ր նման է վերը նշված ինքնակենսագրական երկերի՝ հեղինակներին, է՛ր փառքեր է՛ր նրանցից: Նմանությունը, թերևս, առաջին հայացքից ավելի ակնհայտ է, որովհետև կա թեմայի՝ այսինքն՝ նրանց երկերում արտացոլված՝ ողբերգական կյան-քի և նրա պարկերման ընդհանրություն. նրանք բոլորն էլ իրենց կյանքի գրեթե նույն գեղարվեստավավերական պարմությունն են հյուսել, անշուշտ, փառքեր ընկալումնե-րով ու պարկերավորման ռեալիստական միջոցներով և փառանդի ուժով: Որպես արվեստա-գեղ-գրող ու ականաբեկ պարմող, Սյուրմեյանը փառքերվում է մյուսներից, որովհետև թվարկված բաղադրարարներով են հյուսված նրա ռե՛ն ու անհատականությունը: Այս-պես է նա ստեղծել վիպական այն ինքնատիպ կառույցը, որը, վկայագրության և հու-շագրության համադրություն լինելով, այնպիսի կոթողային երկ է, որ փայլվում է թե՛ իր ճշմարտացի գունագեղ, կարելի է ասել՝ գեղանկարչական նկարագրություններով, թե՛ հեղինակային խոսքի բացարձակ անկեղծությամբ, թե՛ վաղ կերպարներով, որոնք ունեն ընդհանրացման հզոր ուժ: Իսկ այս ամենը հրաշալիորեն ծառայել են հեղինակի ասե-լիքն անմնացորդ բացահայտելուն՝ արդարության ծառավի աշխարհացիք հայության համագգային խոր ցավն ու համամարդկային իղձերը մեծ փրկություններին և աշխարհի փրկիչներին ու պարոններին անկեղծորեն ու ազնվորեն ներկայացնելուն: Սա էլ հենց վեպի վերնագրի խորհուրդն է, իսկ այն նախապես ունեցել էր «Այանքի նախերգան-քը» վերնագիրը: Բայց այս խոդիրն այնպես պիտի ներկայացվեր մեծ փրկությունների, ամբողջ աշխարհի փրկիչներին և պարոններին, որ մարդկայնորեն ընկալելի ու հասկա-նալի լիներ նրանց: Այսինքն՝ հեղինակը **ազգային ու համամարդկային հարաբե-րակցության խնդրի ճիշտ լուծում պետք է գտներ և գտել է իր այս ստեղծագոր-ծության մեջ:**

Նախ՝ հեղինակը՝ որպես դեպքերի ականապես-պատմող, առկա է վեպի բոլոր 25 գլուխներում, որոնք շարակարգված են դեպքերի բնական հաջորդականությամբ: Առհասարակ, վեպի փառքեր գլուխները հեղինակը խելամոռեմ շարակարգել է այնպես, որ դրանք իրենց հեկաթթրաշարժ գործողություններով և աշխույժ, կենդանի պատմով՝ գեղարվեստական առանձին միավորի՝ նորավեպի, պատմվածքի կամ վիպակի փառվորություն են թողնում, թեև դրանք իրենց զարգացման փրամաբանությամբ բխում են նախորդից և պայմանավորում են հաջորդը և այնքան են համաձույլ, որ միասնաբար են կերպում վիպական հոյակապ հյուսվածքը կամ կոմպոզիցիան: Սրանով հանդերձ՝ գեղարվեստական այդ ինքնություն միավորներից ամեն մեկն ունի իր ֆաբուլային յուրահարկությունները, որոշ գլուխներում վաղ մանկության հոմոթախառն հիշողություններն են, որոշ գլուխներում՝ ուսումնառությունը, գալիք սարսափների նախագագսումները, ուրիշներում՝ թուրքերի վայրագությունները՝ հայերի ջարդի ու բռնագաղթի փեսաբաններով, հեղինակի և փրկված սերնդակիցների թախառումները քաղաքից քաղաք, մյուսներում՝ հեղինակի վերհուշն ու խորհրդածություններն են կարարված ողբերգական իրադարձությունների շուրջ:

Այդպիսի հարստություն և կենսական մեծ բովանդակություն ապահովելու երաշխիքը նախ և առաջ գրողի սուր դիպողականությունն է, որով, հիմնական դեպքերին ու գործողություններին զուգահեռ, նկարվել և պարկերվել են նաև արտաքուստ «չընչին», «մանր» թվացող, նրանց անմիջաբար չառնչվող դրվագներ, որոնք հենց բուն կյանքի բազմերանգ հարստությունն են: Դրանք ոչ թե հարվածական կամ միայն գլխավոր հերոսի միջոցով միմյանց շաղկապված դրվագներ են, այլ ամբողջական փեսաժապավենի կարճ կամ երկար փեսաբանների, նույնիսկ ակնթարթային լուսապարկերների միացյալ ամբողջականության փառվորություն են թողնում և ցոլացնում են դրվագային միջադեպեր ու թուցիկ դեմքեր, որոնք թեև վիպական գործողության հիմնական կրողները չեն՝ հայ, հույն, թուրք խաղընկերներ, որբանոցային ու դարոցական ընկերներ, լազ, ռուս գործիչներ, Տրապիզոնում, գաղթի կամ մահվան ճամփեքին, Բաթումում, Պոլսում, Կրասնոդարում, Ռոստովում, Եյսկում, Երևանում, Նոր Բայազետում, Աթենքում, Քանգասում և այլուր պարահաճ գանազան դիպվածային կերպարներ, որոնք ներկայացնում են «կյանքի քառք»:

Ըստ Լ.-Զ. Սյուրմեյանի՝ գրողն ինքը արդեն ընդհանրացված անհարականություն է: Նա իրականում «անձնավորված ամենագեղ» է կամ «անանձնական ամենագեղ», որը, կարգաբերելով կյանքի քառք, ձև է փալիս անորոշությանը և սրելծում է գեղարվեստական պատմություն: Իսկ ո՞վ ավելի լավ կներկայացնի այդ պատմությունը, գրողն ի՞նքը, թե՞ նրա որեւէ հերոսը: «Ուրեմն՝ ինչո՞ւ պատմությունը չներկայացնել գրողի՝ փեսանկյունից: Ինչո՞ւ խոսել կերպարի միջոցով: Կարո՞ղ ենք ավելի հարմար պատմող ունենալ, քան ինքը՝ հեղինակն է: Ինչո՞ւ պատմությունն անկեղծորեն չվերածել գրողի հաղորդմանը»⁴, - գրել է Սյուրմեյանը: Ու թեև ճիշտ է, որ հեղինակն «անձնական պար-

4 Լ.-Զ. Սյուրմեյան, Արձակի փեսանկյա. չափ և խնթություն, գիրք 2-րդ, Երևան, 2008, էջ 61:

մություն» է ներկայացրել, սակայն դա, ըստ էության, համամարդկային է միաժամանակ, որովհետև ճշմարտացիորեն ներկայացնում է Առաջին համաշխարհային պատերազմի, Նայոց ցեղասպանության ու հեղափոխության շրջանի հայ երիտասարդության՝ Ե. Չարենցի բնորոշմամբ՝ Նարդագողի ճանփորդների սերնդի կամ «մանկություն չունեցող մարդկանց» (Ա. Ծառուկյան) կյանքի գեղարվեստական ու վավերական պատմությունը:

«Վճռել էի գրական շացուցիչ ձևերի չդիմել, - խոստովանել է հեղինակը, - այլ պարզապես ասել ճշմարտությունը, ինչպես ճանաչել էի... **Թեև սա անձնական պատմություն է, ինձ շատ էին հուզում համամարդկային ճշմարտություններ,** եւ հենց սկզբից իմ նպատակն էր **Առաջին համաշխարհային պատերազմի ու հետպատերազմյան օրերի հայ պատանիների կյանքի այս պատմությունը դարձնել երգ երիտասարդության, հանուր երիտասարդության, եւ եւ անձնականից անցա համամարդկային:** Թեև շեշտավորված հայկական պատմություն՝ **սա սոսկ հայկական չէ:** Ես աշխարհի մի նոր գլուխ ավելացնել երիտասարդության համաշխարհային առասպելին, մի, այսպես ասած, **հայկական գլուխ**» (էջ 9-10): Նկնց սրա շնորհիվ Սյուրմեյանի 1945 թ. հրապարակած «Ձեզ եմ դիմում, քիկնա՛յք եւ պարունա՛յք» վեպը ջերմ ընդունելության արժանացավ նախ՝ ամերիկյան գրական շրջաններում, ապա՝ ամբողջ աշխարհում ու գուր թաղաքական պարճառներով թերեւս ամենից ուշ՝ Խորհրդային Նայաստանում: Այդ սքանչելի վեպը, խորհրդային գրաքննության թույլտվությամբ, Երեսնամյա լույս տեսավ եւ հայաստանաբնակ հայ ընթերցողին հասանելի դարձավ Նրաչ Պ. Բուջանիկյանի հայերեն թարգմանությամբ՝ անգլերեն հրապարակությունից շուրջ երեքուկես տասնամյակ հետո՝ 1980 թ.: Այս «ուշացումն» ուներ իր թաղաքական պարճառները:

Վեպի նախորդ ուսումնասիրողները գրեթե աչքաթող են արել մի կարևոր իրողություն՝ հեղինակ պատմողի, վկայագրողի եւ հուշագրողի դերը եւ, եթե կարելի է ասել, **հեղինակի ինքնակերպավորումը** վաղ մանկությունից, ցեղասպանության բովից, ջարդերի սարսափներից, որբանոցային թափառումներից մինչև հայ երեխայի հասունացումն ու ամերիկայնացումը:

«**Անձնապես չեմ սիրում մանկության կամ պատանեկության շրջանի ինքնակենսագրություններ՝ գրված հասուն մարդու տեսանկյունից,** երբ հեղինակը շարունակ միջամտում է իր պատմությանը՝ լուսաբանելու այս կամ այն կերպ, բացարձեք այս կամ այն նկարագիրը կամ դեպքը: **Ուրեմն, ահա՛ ինչ որ պատահեց ինձ եւ հե՛նց այնպես, ինչպես պատահեց:** Այսպեղ ոչինչ չի փոփոխված, ոչինչ չի ավելացված» (էջ 7):

Շուրջ մեկ երրորդով հայ բնակչությամբ 45 հազարանոց ծովափնյա մի հինավուրց թաղաքի նախաեղեռնյան կյանքի պատմությունը վեպում իրոք հյուսված է բարձր արվեստով: Դրա շնորհիվ կարծես մեր առջև դրված է մի անխաղախ հայելի, որը, վաղ քարիքի երեխայի մանկական հիշողությունների ողջ համայնապարկերը ներկայացնելով, ցույց է տալիս մեծ ոճրագործություններով սկսված Ի. դարի իրական դեմքը: Իհարկե, ջարդի տեսարանները, ողբերգական այդ դեպքերի ամբողջ քառսը նա չէր ընդգրկելու իր

վեպում: Բազմաշերտ այդ համապարկերում նախ երևում է Մյուրմեյանների ընտանեկան մթնոլորտը՝ ծնողների ու զավակների հարաբերություններով, ազգային, կրոնական, ծխական արարողությունների կենցաղային ու ազգագրական բնորոշ մանրամասներով, երբեմն բնական, երբեմն գավեշտական ու զվարճալի դրվագներով: Մրանց գումարվում են հայ, հույն, թուրք երեխաների՝ նրա խաղընկերների, ինչպես էլ Մյուրմեյանների ընտանիքին առնչվող փարագի հարեւանների եւ բարեկամ-ազգականների հարաբերությունների թարմ ու չխամրող պարկերները: Կենցաղային երևույթներին գումարվում են նաև ազգամիջյան հարաբերությունների մանկական ընկալումների գունագեղ վրձնահարումները: Այդ հավաքարմությամբ էլ ճշգրիտ են ներկայացված ու մեկնաբանված հայկական ժողովրդական բանահայտական նմուշները, ազգագրական երգերն ու պարերգերը, որոնցով համեմվում էին ազգային ու կրոնական փոնակափարությունները: Այս իմաստով աչքի է ընկնում վեպի երկրորդ գլուխը, որում Տրապիզոնում զարկական փոները՝ Մեծ պահքը, Ավագ հինգշաբթին ու Ուրնվան եւ այդ առթիվ մատուցվող Պատարագը պարկերված են բնորոշ մանրամասներով ու դրանց միախառնվող, հենց իրեն՝ հեղինակին առնչվող ծիծաղաշարժ իրավիճակներով: Այս համապարկերում էլ ներկայացվում է պարմող-հերոսն ինքը, որի մտապարկերները, ընկալումներն ու զգայություններն էլ հյուսում են բախտորոշ ու ռդերգական իրադարձություններով հարուստ մի ժամանակահատվածի պարկերը կազմող խաչարանկար գորգը:

Նուշաշարն սկսվում է ութամյա դպրոցահասակ մանկան ռոմանտիկ աշխարհընկալման ու զվարճալի արարքների պարկերումով: Երեխան ընտանեկան դաստիարակությանը գուցակցում է դպրոցում սովորածը եւ զինվոր է խաղում. իրեն երեւակայում է ազատամարտիկ եւ հայկապես Անդրանիկի բանակի մի զինվոր, որը Փարիզից վերադարձած, հեղափոխական անցյալ ունեցող Նարություն քեռու առջև կիսագինվորական մարմնամարզական վարժություններ է կատարում ֆրանսերեն հրահանգներով. «Միշտ զինվոր էի խաղում ու զինվորական համագեղատ ունեի եւ հրացան, թուր ու հանդերձանք: Ես պիտի կռվեի Անդրանիկի՝ ազգային հերոսի համար, որ իր հեղափոխականների գնդերով կուրծքը դեմ էր անում Օսմանյան կայսրությանը» (էջ 23): Վեպի առաջին մի քանի գլուխներում պարկերված է 1894-96 թթ. հեյոո՝ նախքան Նայոց մեծ եղեռնը, փրապիզոնահայության շուրջ 20 փարվա խաղաղ ու բնականոն կյանքը հարեւան թուրք, հույն, լազ, հրեա (վերջիններս ընդամենը մեկ փուն էին կամ հեղինակն այդքանը գիտեր միայն) բնակչության հեյո միասին: Բարիդրացիությամբ ապրող այդ մարդկանց, մանավանդ հայերի եւ հույների միջև չկար ազգային խորականություն. արտաքուստ գոնե անհանդուրժողականություն չկար անգամ հայերի եւ թուրքերի միջև, իսկ երբեմն ծագած բախումներն էլ առանձնապես սուր բնույթ չէին կրում, որովհետեւ, ինչպես հեղինակն է դիպուկ նկատել, գոնե ձեւականորեն քաղաքակիրթ երեւալու մոլությամբ փայլող թուրքերը միշտ էլ իրենց քրիստոնյա հարեւաններից ու մանավանդ հայերից թաքցնում էին իրենց գազանային նկրտումները: Եւ քանի դեռ դրսից չէր հրահրվում, նրանց շփումներն ու մարդկային հարաբերությունները

նույնպես հանդուրժողական էին: Նույնիսկ հայերի ազգային կամ հոգևոր փոփոխությունների և ծիսակատարությունների նկատմամբ թուրքերի կողմից դրսևորվում էր ձեռական հարգալից վերաբերմունք: Նեղինակը դրանք նույնպես բնական է համարել և, իր որդեգրած սկզբունքի համաձայն, փարիսների հեռվից հեղադարձ հայացքով կամ իր ասած «հասուն փարիսի աչքով» չի վերաիմաստավորել, այլ դեպքերը պատկերել է մանկական փարիսների անխառն զգացողությամբ: Նիշում է իր գրեթե բոլոր գավեշտական չարահայացությունները, ձախողումները, կրած չարչարանքներն ու պատիժները: Մի կենդանի, բազմաշերտ գեղապատկեր է հափկապես Զափկի փոփոխ առթիվ բաղնիք գնալու, Ավագ հինգշաբթիի Ուրնվայի պահին խայտառակվելու փեսարանը, Նիսուսի խորհրդանշական թաղման և Նարության առթիվ Ավագ ուրբաթի Պապարագն ու նրա մեկնությունը, իրենց չգործած, անգամ չհասկացած մեղքերի խոստովանության, չարից, սատանայից «հրաժարելով հրաժարիմքի», ինչպես և մաս կամ հաղորդություն առնելու դրվագների հանգամանալից նկարագրությունը:

Սա, իհարկե, հայ մարդու քրիստոնեական դաստիարակության, ազգային բնավորության ու մրաժողության, մարդկային նկարագրի ձևավորման պատկերման իմաստով գեղարվեստականի հեղափոխական-ազգայնական-ճանաչողական որոշակի արժեք: Սակայն սա նույնպես ծիսական արարողություններ, ազգագրական մանրամասներ կամ ծիսադաշարժ իրադրություններ պատկերող մի սովորական նկարագրություն չէ, այլ խլամի և քրիստոնեության հակադրության, թուրքերի կողմից քրիստոնեական արժեքները նվաճելու և սեփականելու քաղաքականության ու պայմանության նուրբ ու սուր հեղանակով ներկայացում. «Մենք միշտ գնում էինք անհավարների բաղնիք՝ գյավուր համամի, որը նախապես բյուզանդական եկեղեցի էր եղել: Երբ հզոր բանաստեղծ-սուլթան Մոհամմեդ Երկրորդը նվաճեց Տրապիզոնը՝ Կոստանդնուպոլիսը գրավելուց ութ փարի հեղու, քաղաքի ամենամեծ ու գեղեցիկ եկեղեցիները մզկիթների ու հասարակաց բաղնիքների վերածել փվեց՝ ի հավերժական փառք ալլահի: Թե՛ քրիստոնյաներ, թե՛ թուրքեր լողալու էին գյավուր համամիում, բայց երբեք միասին» (Էջ 31):

Իր մասին այսքան անմիջական ու մանկական մաքրության չափ անմեղ ու անկեղծ: Բայց գրող Լ.-Զ. Մյուրմելյանն այսպիսին է իր սրելոծած բոլոր պատկերներում: Դրանք բուն իրականության հարագափ պատկերն են՝ անխաղախ ու հավասարի: Այսպես էլ ահա կենսական հանգամանքներն են հարկադրել նրան վաղ մանկությունից ճանաչելու թրքության իրական էությունը՝ ե՛ր համաշխարհային չարիքը մարմնավորող կրոնամոլ ու ցեղամոլ հայապոչաց ծայրահեղ շովինիստներին, ե՛ր բանականության ու խղճի թելադրանքով ապրող մարդկանց: Սակայն նույն կերպ նա ճանաչել է հայ իրականությունը՝ վաղ փարիսի քրիստոնեական դաստիարակությունից, ազգային ու բարոյական նկարագրի վեհությունից մինչև թե՛ միջկուսակցական ու ներկուսակցական անիմաստ պայքարները: Թրքական սահմանադրության՝ հուրիեթի ոգեշունչ օրերին մրցակցության մեջ էին հայ թերթերը: Իրենց փարքեր մեկնաբանություններով նրանք հաճախ էին հրահ-

թում միջկուսակցական բախումներ. միմյանց քննադատող «Ազադամարի» ու «Բյուզանդիոնի» ընթերցողները քաղաքական հակառակ կողմնորոշում ունեին, և նրանց միջև բանավեճերն անխուսափելի էին: «Ազադամարի» ընթերցողները «տաքարյուն, անպարասխանաբար մարդիկ էին, ընկերվարության և այլ բաների մասին վրանգավոր գաղափարներով: Նրանք «վերելից էին նայում «Բյուզանդիոնի» ընթերցողների վրա՝ որպես հերամնաց ու վախկոպ էֆենդիներ: Խոհեմ «Բյուզանդիոնը» զգույշ էր՝ չթշնամացնելու թուրքերին, և անվտանգ ընթերցվում էր վաճառականների ու եպիսկոպոսների կողմից»:

Կարծում ենք՝ բնավ աննպատակ չեն փարբեր կուսակցությունների պարկանող հոր և Լևոն քեռու՝ միմյանց քարկոծող բանակիմների հիշողությունները: «Նայրիկը թունդ կողմնակից էր հայ-թուրքական բարեկամության, ու նրա համար երոպականացած թուրքերն ավելի չարաշուք էին, քան հին-գլուխ թուրքերը: Նա նորից ծաղրածանակի ենթարկեց դաշնակցությանը. «Կործանում է մեր ազգը: Արդեն քարտբանդ արեց մեր դպրոցները, երկպառակեց մեր ժողովուրդը: Միջազգային քաղաքականությունից ի՞նչ են հասկանում ձեր ղեկավարները» (էջ 71): Իհարկե, վեպի հերոսազա գլուխներում ներկայացվում են ջարդերի բոլոր պարճառները՝ թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ կրոնական, թե՛ պարամաշակոյային, թե՛ սոցիալ-վրդեսական կապված թուրքերի պանիսլամական ու պանթուրքական ծրագրերի հետ, և հասկանալի է դառնում, որ անկախ կուսակցականների «հեղափոխական հիմարությունից» ջարդեր լինելու էին, իսկ ազգային հեղափոխությունը հայության ինքնապաշտպանության ճիգն էր և ազադարենչության արքահայրությունն ու փրկության միակ միջոցը:

Իսիսը է արքահայրվել Մյուրմեյանը մեր թույլ քված կոպիս սխալների ու դրանց հերոսանքների մասին: Միտալներ, որ, ցավոք, այսօր էլ ենք գործում՝ նախորդները մոռանալով: «Ձեզ եմ դիմում...» վեպի սկզբնամասերում դա հայրենի քունն ու հողը լքելու և պանդիսպության դիմելով ու հայրենիքը դադարեցնելով թուրքերին ու թրդերին կամավոր հանձնելն էր: Տրապիզոնի նահանգից հայերի մեծ արքահոսք կար դեպի Ռուսաստան՝ Մուխում. գնում էին ծխախոտ աճեցնելով մեծ եկամուտ ստանալու հույսով: Տագնապալի իրավիճակ էր ստեղծվել արքագաղթի պարճառով, որից դժգոհում էին գյուղացիներն իրենք. «Ամբողջ գյուղն ուզում է Մուխում քեղափոխվել, - ասացին նրանք: - Շուրջ Ռուսաստանն ավելի ծխախոտ կարքադրի, քան մենք:

- Ընկերներ, - ասաց քեռի Լևոնը խեղդված ձայնով, - դուք պեպրեք է համոզեք նրանց, որ մնան: Թուրքերի ուզածն էլ այն է, որ մենք չվենք Դա կրկարացնի մեր այսքեղի ուժերը: Ապագան ավելի լավ օրեր է վերապահել մեզ համար» (էջ 80):

Իսկ վեպի վերջնամասում ավելի խիստ է արքահայրվել Կարս բերդաքաղաքն առանց կրակոցի հանձնելու հերոսանքների և Ալեքսանդրապոլի խայրատակ դաշնագրի մասին. «Ամբողջ երեք օր թուրքերը կողոպտեցին, բռնաբարեցին ու մորթեցին Կարսի հայերին: Նարյուրավոր ռազմագերիների հագուստները հանել քվեցին ու նրանց ողարկեցին Էրզրում՝ բանվորական ջոկարներում աշխատելու: Եւ, փաստորեն, մինչև վերջին մարդը մեռավ քաղցից ու ցրվից: Միաժամանակ թուրք քղամարդիկ, կանայք

ու երեխաներ գանգվածաբար փողափռվելից չի Կարս՝ հասարակական համար ջարդված հայերի թափուր փնտրում, և, այսպես, պարմական Հայաստանի մի մասը եւս լրիվ թուրքացվեց... Անկարայի Ազգային մեծ ժողովը... պահանջեց ու ստացավ Հանրապետության հողերի կեսը և Հայաստանի ունեցած գրեթե բոլոր գետերը, զինամթերքը, ջորիներն ու գնացքները: Մինչ բանակցություններ էին գնում Ալեքսանդրապոլում՝ ինքնասպանության համագոր խաղաղության համար, կառավարությունը մեզ ուղարկեց Նոր Բայազետ՝ վերսկսելու մեր երկրագործական ուսումը» (էջ 221-222):

Եղեռնի իրողությունը վերադարձվեց չի պարկերվում, այլ աստիճանաբար՝ առաջին իսկ նախանշանների մանկական իմաստավորումներով, հույս, թուրք խաղընկերների հետ ունեցած գրույցների պարզամիտ մեկնաբանություններով, որոնք նրա խոսքին հաղորդում են առավել բնականություն ու հավաստիություն:

Վեպի «Իմ թուրք խաղընկերները» գլխում արդեն բացահայտվում են երկու փառքեր՝ քրիստոնեական այլասիրության, բարեսիրության ու բարեկրթության և իսլամական «Ամեն ինչ բոնն է, ամեն բան քեզ համար է» դաստիարակությունների արմատական հակադրությունը: Այսօրվա եւս Սյուրմեյանը դրսևորել է նուրբ դիպրողականություն, որը նրա կերպած գեղարվեստական պարկերին հաղորդում է խորք ու համոզություն: Մահմուդն ու Շյուքրին համեմատաբար բարեկրթ թուրքեր էին, իրենց գոնե պարկեշտ էին պահում հայ դրացիների հանդեպ, բայց նորեկ խաղընկերները անփանելի ստոր փիպեր էին: Սկզից եւեթ սրանք թշնաբար էին նայում այլադավան խաղընկերներին և հագիվ էին զսպում ու թաքցնում իրենց արելությունը «գյավուր շների» հանդեպ: Զավենը գիպեր, որ նրանք ընդհանուր կուսակալի գավակներն են. վրանգավոր օրերում հարկ չկար թշնամանալու նրանց հետ և մանկական դիվանագիպությամբ թույլ էր փալիս, որ իրեն հաղթեն: Բայց ահա մի օր սպառվում է համբերությունը. անխուսափելի վեճ է ծագում նրա և խաղում պարտված մրցակցի միջև, և նա, վրեժխնդրությունից մղված, բացում է մի գարնուրելի գաղ փնիք. «Ուզում էի դիվանագետ լինել, քանի որ վրանգավոր օրեր էինք ապրում, բայց համբերությունս հարավ»:

- Գյավուր շո՛ւն, այդ ինչպե՛ս ես խոսում եմքս, - ճշաց նա երեսիս: - Արդեն ձեր օրերը համրված են: Ձեր բոլորի վզերը պիտի կտրենք: Բոլորիդ պիտի ջարդենք: Ոչ մեկ հայ ողջ պիտի չթողնենք: - Նա ձեռքը փարավ-բերեց կոկորդի փակ ու ցույց փվեց՝ **ինչպես էին մորթելու մեզ**» (էջ 83):

Սահմուկեցուցիչ այս հայրնությունը թուրք պետության այն գաղ փնիքն էր, որ ակամա դուրս էր թռչում ընդհանուր կուսակալի գավակի բերանից: Այս դրվագում առկա է շար հեղաթրքի մի նրբերանգ. հայ եղբայրները զարմանքով նայում են իրենց մրերիմ թուրք խաղընկերներին՝ հուսալով, թե նրանք կհերքեն ընդհանուր կուսակալի լամուկների ասածը կամ գոնե ներողություն կխնդրեն: Սակայն պարզվում է հրեշավորը. հենց այդ իրողությունն է քննարկվել Բեմգի Մամի բեյի, ընդհանուր կուսակալի և մյուս բարձրաստիճան թուրքերի հետ կազմակերպված «խորհրդակցություններում», և այդ մասին փողյակ են թե՛ անձամբ լսած երեխաները՝ Շյուքրին ու Մահմուդը, թե՛ նրանց «բարեկրթ» մայրը՝ Սելմա հանրմը, որոնք ամիսներ շարունակ անընդհար ժպտացել են իրենց

բարեկամ հայերին և չեն զգուշացրել նրանց սպառնացող մոտարկույ աղերի մասին: Սա էր բնաջնջման այն ծրագիրը, որը գործադրվեց գերագույն դաժանությամբ: Եւ ոչ մի արժեք չեն ունեցել և չունեն թուրքական պետությանն ու ժողովրդին հայ իրավագետների, ռազմագետների, բժիշկների ու դեղագործների, ճարտարագետների ու շինարարների, արհեստագործների ու հողագործների, երաժիշկների ու թարերական գործիչների, գրադարանային երախտավորների, բոլոր ոլորտների մասնագետների մարտնչած ծառայությունները: Իսկ երբ հայերը թուրքերի, քրդերի, լազերի և մյուս ավարառուների վայրագություններին փորձում էին հակադրվել իրենց անձի, մարդկային իրավունքների, ազգային արժանապատվության և ունեցվածքի պահպանության համար, մեղադրվում էին հայրենիքի դավաճանության մեջ: Ավելի էր սաստկանում հայերի վիճակը քրիստոնյա ռուսներին աջակցելու և նրանց օգնությամբ թուրքական լծից ազատագրվելու փորձերի դեպքում: Ռուսները հայերի համար դարձել էին թուրքական մղձավանջից ազատագրվելու խորհրդանիշ: Անգամ դպրոցականներն էին դա գիտակցում և ռուս զինվոր քրեաներին դիմավորում էին ցնծությամբ: Տպավորիչ է վեպի «Իմ ռուսական գդակը» գլուխը, որը հենց թուրքապարակ, սակայն բոլոր տեսակի թուրքերից հիասթափված հայ պարանոռ ռուսասիրության արքայադուրությունն է:

Թուրքիայից դուրս՝ ռուսների փրկապետության փակ գրնվող ամեն ինչ նրա համար Ռուսաստանն է, «սևծովյան ափի լավագույն քաղաք» Բաթումը՝ նույնպես: Ռուսական նավով հասնելով Բաթում և առաջին անգամ ուրբ դնելով այնտեղ՝ նրա սիրտը լցվում է երանությամբ. «Ռուսական հողի վրա կանգնած՝ խիստ ապահով էի գգում ու , մի տեսակ, իմ քանը, թեև բոլորովին փառքեր աշխարհում էի գրնում ինձ: Սա Քրիստոնեություն էր ու Քաղաքակրթություն, ծիծաղի, բարության, երաժշտության երկիր... - Ուրեմն Ռուսաստանում եմ, ուրեմն սա Բաթումն է, - անվերջ ասում էի ինքս ինձ» (Էջ 163): Եւ պարանին ունեցել է մի շար պարզ երազանք՝ մի հասարակ ռուսական գդակ, որ դնում էին Բաթումում դպրոց հաճախող իր քրեակիցները: Իսկ երբ գրնում է քրորված, կեղտոտ, մի քանի տեղով ծակծկված այդպիսի մի նվիրական գդակ, ծոցում է պահում հակառակ մարերիների կշտամբանքներին: Գդակն, իհարկե, խորհրդանիշ է, իսկ հայ մարդու մեջ այսպիսի երազանք բնականորեն ծնվել էր թուրքական դարավոր լծի փակ տառապանքից, թուրք պետությանը հավաքարմորեն ծառայելու դիմաց անիրավիկուց:

Վեպում, իհարկե, ասվածը հասարակորդ բազմաթիվ փաստեր կան, սակայն առավել փայլունից են թուրքերենի ուսուցիչ պարոն Օհանյանի և Բեմգի Սամի բեյի հրապարակային ելույթները: Իր պերճախոսությամբ պարոն Օհանյանը գերազանցում էր բոլոր թուրքերին, Բեմգի Սամի բեյի հանձնարարականով նա ժամանակին այնպես էր փառաբանում թուրքական սահմանադրությունը՝ իր ելույթը զարդարելով թուրքերենի հիմքը կազմող պարսկա-արաբական բառերով, որոնցից շատերի իմաստներն անգամ անհասկանալի էին ունկնդիր թուրքերին: Տասնամյակներ շարունակ նա թուրք սերունդներին սովորեցրել էր իրենց մայրենի լեզուն, թուրքերեն էր սովորեցրել նաև հայ երեխաներին: Բայց ահա 1915 թ. հունիսի 24-ին՝ հայ մարավորականներին ու հեղափոխականներին ձերբակալելուց, արքայություն կամ գնդակահարություն, գնդի հասակի հայ տղամարդկանց

ժանդարմական միջոցներով առանձնացնելուց ուղիղ երկու ամիս հետո, նրան հարկադրում են հայ բազմության առջև բարձրաձայն կարդալ և թարգմանել մնացած խաղաղ հայ բակչությանը աքսորելու թուրք կառավարության հրամանը: Ի դեպ, այդ հրամանը և Բեմգի բեյի ելույթը գրեթե նույն բովանդակությունն ունեն: Մյուսներն էլ էին քաղաքապետ, մարզեր էին փոխանակում, հարկապես դադարապարտում էին Գերմանիայի դիրքորոշումը և արդեն նկատում էին, որ թուրքերի մեթոդները քարքար են լինելու հազարավոր բեյզիսցիներին աքսորելու գերմանական եղանակներից: Նրանում և ելույթում հնչած ոչ մի խոսքման հայերը չէին հավատում, որովհետև արդեն փեսնում էին, թե ինչպիսի ախորժակով է իրենց քներն ու ունեցվածքը շրջապարսի թուրք խուժանը սպասում կոդալուրի ազդանշանին:

Նկատում էին նաև թուրքերի երախտամոռությունը դադարապարտող անգոր խոսքեր. **«Մեզ ապերախս կոչե՛լ, երբ հայերս ենք կառուցել Թուրքիան: Մե՛նք ենք կառուցել պալատները, որպեսզի ապրում են արյունարբու սուլթանները, մե՛նք ենք կառուցել ամենամեծ մզկիթները, մե՛նք ենք կարել նրանց հագուստներն ու կոշիկները, խնամել նրանց հիվանդներին ու մինչև իսկ իրենց երեխաներին կարդալ ու գրել սովորեցրել իրենց սեփական լեզվով: Մենք կառուցել ենք, ու նրանք քանդել են: Եւ հիմա իթթիհապը հայկական հարցը պիտի լուծի՝ քաղաքներով բոլորիս՝ մարդ ու կին ու երեխա...»** (Էջ 88-92):

Իսկ գլխավոր հերոսի՝ Զավենի վերաբերմունքն առկա է ողբերգականի և կարակերգականի փոքրերով հյուսված վեպի գրեթե բոլոր գլուխներում և մանավանդ «Մահվան ճանապարհին» գլխում, որտեղ խաղաղ հայ բնակչության փրկահանման, բռնագաղթի ու սպանդի, ինչպես և թուրք ջարդարարների վայրագության պարկերները ներկայացված են որպես սահմնեցուցիչ իրողություններ: «Ճակարագրական հուլիսի մեկն եկավ ու անցավ, և մեր ժողովրդի դեմ արձակված մահավճիռը գործադրվեց» (Էջ 112): Ու թեև Մյուրմեյանն իր վեպում պարկերել է Տրապիզոնի նահանգում կարարվածը, սակայն **Եղեռն կոչվածը կամ Յեղասպանությունը նույն ծրագրով ու ձեռագրով իրագործվել է Արևմտյան Նայաստանի բոլոր նահանգներում:**

«Մահվան ճանապարհին» գլխում հնարավոր է փեսնել մարդու նկարմամբ կիրառված դաժանագույն ոճրագործության, սարսափների, ահաբեկումների, նվաստացումների ու կրքանքների այն համապարկերը, որով մարդկային ցեղի ամբողջ պարմության մեջ կարող են պարծենալ միմիայն թուրքերը: Թշնամու պարպադրած մահվան սարսափներին, պարերագմի բերած արեավիրքնեհջի Մյուրմեյանը հակադրում է հայության հարաբերման բնական ձգտումն ու ապրելու կամքը: Նրա համար գերադասելի էին ազատարեն ու խիզախ հայերը, որ անկարելի պայմաններում գնեք էին վերցնում ու մարքնում թշնամու դեմ հանուն իրենց մարդկային ու ազգային արժանապարտության:

Նկատել ենք, որ մինչև չափահաս դառնալը Մյուրմեյանի հերոսը զինվոր էր խաղում, այն էլ Անդրանիկի՝ բանակի զինվոր: Լսելով Բեմգի Մամի բեյի խոսքում Վանի հերոսամարտի և վանեցիների հաղթանակի մասին՝ նրա սիրտը լցվում է հրճվանքով. **«Զգիտեմ ինչո՞ւ ես Վանի հայերին պարկերացրի որպես մարդկային ռազմիկ-**

ների, որոնք ապրում ու մարտնչում էին կարմիր մի երկնքում: Ա՛խ, ո՛ր էր՝ Վանում լինել: Ո՛ր էր մի կերպ հրեղեն ձիու վրա թռչնի դեպի այդ կարմիր ամպերը: «Վան» բառն անընդհապ թնդում էր իմ մարքում, երբ պառկեցի այդ գիշեր, քնելու անկարող» (Էջ 92):

Նկարաբրեր է եւ գրողի վերաբերմունքը թուրքերի՝ հանդեպ: Ընդգծված չարություն, ռիսակալություն ու բացահայտ թշնամանք չկա, բայց կա վրեժ, հարուցման արդար պահանջ, որ փառքեր առիթներով հնչեցրել է հեղինակն այս վեպում եւ հրապարակախոսական հոդվածներում: Պոլսում նա մարդկային ցավ է զգում՝ իմանալով, որ համաշխարհային պարերագմի հերոսներով կան թուրք որբեր, եւ նրանց մարդասիրական օգնություն է փալիս, որովհետեւ քրիստոնյա հայ է եւ ունի գթասրտություն: Ճիշտ ու ճիշտ իր բնորոշված «անուղղելի ռոմանտիկ դոնկիխոտների ցեղի» ժառանգն է նա. իրեն մարդ է զգում, երբ թուրքերի մեջ բարության ու մարդավարության նշույններ է տեսնում: Իսկապես էլ եղել են իրենց հարեալությամբ ապրած ու հայերին օգնած հայուկներ բարեսիրտ թուրքեր: Նավաբանք, որ թուրք ժողովուրդն իսկապես մեղավոր չէ հայերի ցեղասպանության մեջ, եւ միայն կառավարությունն է իրագործել այդ հրեշավոր ծրագիրը: Դժվար է հավատալ, թե թուրք պետությունը առանց իր ժողովրդի լայն խավերի անմիջական աջակցության կարողանար իրականացնել ողջ Արեւմտյան Նայաստանը հայաթափելու դժոխային ծրագիրը: Այդ խնդրում, անշուշտ, մեղքի իրենց բաժինն ունեն ոչ միայն թուրքական պետական կառույցները՝ խորհրդարանը, ռազմական եւ ընդհանուր ապահովության նախարարությունները, բանակն ու ժանդարմները, ողջ պետական քարոզչական մեքենան, նահանգապետ ու գավառապետ, քաղաքապետ ու գյուղապետ, այլեւ ողջ թուրք հասարակությունն իր բոլոր շերտերով ու խավերով՝ մրավորական, հոգեւորական, պետության արտոնությամբ ու հրահանգներով գործող ավագակային խմբեր, զանգվածային սպանությունները, հայերի ունեցվածքի կողոպուտը, թալանն ու բռնազավթումները հաճույքով ու ցնծությամբ իրականացրած թուրք ամբոխը: Առանձին անհատներից բացի՝ հազիվ թե հնարավոր լինի մարտնչույց անել թուրք հասարակության մի խավ, որը ջարդերին ու թալանին բացարձակապես չի մասնակցել:

Տարիներ են անցել, եւ մի օր սավրովելիս երբեմնի երեխան, որ ամերիկացի էր արդեն եւ պարբաաս էր կովելու Ամերիկայի համար, յոթ ճերմակ մազ է նկատում իր քունքերին: Դրանք անցած դառն կյանքի, հարազատների, ծննդավայրի, դասընկերների մի ողջ ժողովրդի ու հայրենիքի կորստյան հերոսներն են, որ պարպադրում են նրան մեծ ողբերգության համար դժգոհելու նույն Ամերիկայից, նույն Ռուսաստանից, նույն Թուրքիայից, բոլոր մեծ քրեություններից, աշխարհի փրկիներներից ու պարոններից եւ նախարելու նրանց, որովհետեւ չի կայացել մարդկանց ցանկալի եղբայրակցությունը:

Տեսարանը կամ պարմությունը պիտի հանգեր ամփոփման կամ գեղարվեստական ընդհանրացման: Նկարվում է, որ հոգեբանական ռեալիզմը, որը Մյուրմելյանի նախասիրած գեղարվեստական ուղղությունն է, պարպադրել է նրան կենտրոնանալու ոչ թե արարաբի զործողության վրա եւ մնալ մակերեսին, այլ գիտակցության ու զգացմունքի

հոսքը առավելապես նպատակամղել, կենտրոնացնել հերոսի ներքին՝ հոգեբանական շերտերի բացահայտման վրա և պարկերել է, մի պեսակ, «ներքին գործողություն»:

* * *

Լ.-Զ. Մյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, քիկիներ և պարոններ» վեպի անգլերեն հրապարակությունից՝ անցել է շուրջ յոթ տասնամյակ, իսկ հայերեն առաջին հրապարակությունից՝ ավելի քան երեք տասնամյակ: Այդ ընթացքում նա կարարել է պատմական այն առաքելությունը, որի համար ստեղծվել էր: Սակայն այսօր այն դարձել է մարենագիտական փնտրվող արժեք և մարչելի չէ ո՛չ հայ, ո՛չ էլ այլազգի ընթերցողներին: Մինչդեռ այդ մնայուն գեղարվեստական արժեքը՝ արդիական իր հարցադրումներով, պատմիքնաբանությամբ, պարկերավորման ու կերպավորման բարձր արվեստով, հերոսների հոգեբանության խոր բացահայտումներով, մեր ժամանակներում ձեռք է բերում նաև հույժ արդիական քաղաքական-դիվանագիտական կարևոր արժեք: Այժմ երբ մոտենում է Նայոց Մեծ եղեռնի 100-ամյակը, և հայոց պետականությունը մեծ ջանքեր է ներդնում Յեղատապանության միջազգային ճանաչման ու ռճրագործությունը դարապարտելու ուղղությամբ, անհրաժեշտ է իրականացնել նոր հրապարակություն թե՛ հայերենով, թե՛ այլ լեզուներով: Նայոց եղեռնապարտմի գրականության ամենավառ էջերից մեկն է այս վեպը, որը աշխարհին պետք է ներկայացվի որպես հակակշիռ Եղեռնի իրողության թրքական ուրացումների և հակահայ բարոզության: